

- 33 Ուր նա յաճախ քարոզելով ,  
 Ճըշմարտութիւնն ոչ գաղելով ,  
 Չրգէր առ իւր զանձինս յղով ,  
 Որք անսային նրմա սիրով :
- 34 Յորոց որ էր յերկբայս անկեալ ,  
 Չարտուղելոց շաւիղ կալեալ ,  
 Ի թիւր կարծեաց զայն փարատեալ ,  
 Ածէր ի առհ անքոյթացեալ :
- 35 Եւ որք էին պարզամիտ տիր ,  
 Ոչ գիտելով ըզվէպ եւ գիր ,  
 Ոչ զօրութիւն գըրոյն կամ զիր  
 Չորոշէին յիսկէն զպատիր :
- 36 Ի սոյնպիսեաց Սարգիս չատիւր ,  
 Այլ մանաւանդ գովաբանիւր ,  
 Ապա որ ն՞մա ոչ ներհակիւր ,  
 Ունէր նա զայն ի կողմն իւր :
- 37 Այլ ոչ կարեմ ասել այսպէս  
 Ըզյամառեալ անձանց պէսպէս ,  
 Որոց կագելն յանգըգնապէս  
 Եւ բարբանջելն էր իբրու ծէս :
- 38 Որք թէպէտեւ տեղեակն էին ,  
 Եւ հանապազ ուսանէին ,  
 Այլ ոչ երբէք հասանէին  
 Ի գիտութիւն պարզ ճըշմարտին :
- 39 Որոց ախորժ էր միայն այն ,  
 Որ նըզովէր զ՞Քաղկեդոնեան  
 Ժողով , կանոն , սուրբ հարս համայն  
 Ի՛ ըզՍուրբ Լեւօն միանգամայն :